ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

Գավառի պետական համալսարանի 25-րդ գիտաժողովը նվիրված է համալսարանի հիմնադիր ռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ, Գավառ քաղաքի պատվավոր քաղաքացի Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ծննդյան 95-ամյակին:

Շնորհակալություն եմ հայտնում գիտաժողովի կազմկոմիտեին և բոլոր մասնակիցներին՝ ԳՊՀ հոբելյանական գիտաժողովին մասնակցության հայտ ներկայացնելու, ինչպես նաև գիտահետազոտական գործունեությամբ զբաղվելու, կրթությունն ու գիտությունը շաղկապելու, մասնագիտական հարուստ գիտելիքն ու փորձառությունը երիտասարդներին փոխանցելու կարևոր առաքելությունն իրականացնելու համար: Գավառի պետական համալսարանի հիմնադիր ռեկտորի պատգամն է՝ դաստիարակել մարդ, կրթել մասնագետ, միաժամանակ զբաղվել հետազոտությամբ, պեղել գիտության շերտերը և նոր գիտելիք ստեղծել ու շրջանառել, ինչին իրենց նպաստն են բերում նաև գիտաժողովները: ԳՊՀ 25-րդ գիտաժողովը Գավառի պետական համալսարանի համար խորին խորհուրդ ունի, քանի որ հարգանքի տուրք է բուհի հիմնադիր ռեկտոր Հրանտ Հակոբյանի հիշատակին, ում ողջ գիտակցական կյանքն ու գործունեությունը իր հայրենակիցներին սիրով և ազնվորեն ծառայելու, կրթության և գիտության գործին անմնացորդ նվիրվելու բացառիկ օրինակ է: Հրանտ Հակոբյանը իր հայրենի եզերքի և մայր ժողովրդի հավատավոր զավակն էր, ով որպես իր ծննդավայրի ու ժողովրդի հանդեպ որդիական սիրո խոստովանություն և երախտագիտության սքանչելի արտահայտություն՝ կատարեց բացառիկ մի գործ՝ համալսարան հիմնեց: Հրանտ Հակոբյանը փիլիսոփա էր, մանկավարժ, բանասեր և պատմաբան, ով դարձավ Հայաստանում պատմափիլիսոփայության զարգացման հայրերից և ռաֆֆիագիտության հիմնադիրներից մեկը: Հիշատակման են արժանի պրոֆեսոր Հակոբյանի՝ Եղեռնի դատապարտումը Ռաֆֆու երկերում մենագրությունը, մյուս աշխատությունները: Նա կրթության և գիտության ջատագով էր, ով ի զորու եղավ բարձրագույն դպրոց հիմնել: Իսկ մինչ այդ Հրանտ Հակոբյանի նախաձեռնությամբ և Երևանի պետական համալսարանի ռեկտոր Սերգեյ Համբարձումյանի համաձայնությամբ կյանքի կոչվեց խորհրդային տարիների համար անասելի համարձակ ծրագիր՝ ԵՊՀ աթեիզմի ամբիոնը վերակազմակերպվեց կրոնի տեսության և պատմության

ամբիոնի, որի հիման վրա Հրանտ Հակոբյանի գործուն մասնակցությամբ պետք է տարիներ անց ձևավորվեր աստվածաբանության ֆակուլտետը: Որպես երախտագիտության առհավատչյա՝ ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետում լսարան է անվանակոչվել Հրանտ Հակոբյանի անունով և տեղադրվել կիսանդրին: Նրա հիմնադրած բուհի՝ Գավառի պետական համալսարանի կենտրոնական մասնաշենքի բակում ևս տեղադրված է Հրանտ Հակոբյանի կիսանդրին, որի վրա արձանագրված է հավերժության երիցս ճշմարիտ սահմանումը՝ թումանյանական «Գործն է անմահ...» բանաձևը: Հրանտ Հակոբյանի կյանքի գործը Համալսարանի հիմնադրումն էր՝ իր դստեր՝ այն ժամանակ Գերագույն խորհրդի, ապա Ազգային ժողովի պատգամավոր, ՀՀ Սփյուռքի հիմնադիր նախարար, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանուշ Հակոբյանի հետ միասին: Նրանց շուրջ համախմբվեցին նվիրյալներ և Հրանտ Հակոբյանի երազանքը ձև ու մարմին ստացավ, իրականություն դարձավ: Ասում են, որ Համալսարանը Հրանտ Հակոբյանի հինգերորդ զավակն է, ում անհուն սիրով փայփայել է, խնամք տածել, հիմքերը մարդասիրությամբ և ազնվությամբ ամուր շաղախել, կայացրել ու զարգացրել: Հատկանշական է, որ Գավառի պետական համալսարանը տակավին երկու տարին չբոլորած Հայաստանի երրորդ Հանրապետությունում ստեղծված առաջին պետական բուհն է, որն արդեն երեք տասնամյակ հյուսում է իր կենսագրությունը՝ Գավառը վերածելով համալսարանական քաղաքի, շարունակաբար ընդլայնելով միջազգային համագործակցության ուղեծիրը, պատրաստելով և կյանք ճանապարհելով ավելի քան ութ հազար շրջանավարտների: Կարևոր ձեռքբերում ենք համարում բուհի բազմաթիվ դասախոսների կողմից ատենախոսությունների պաշտպանությունը և գիտության դոկտորի ու թեկնածուի գիտական աստիճաններին արժանանալը: Ուրախալի է այն փաստը, որ համալսարանի լավագույն շրջանավարտները զբաղվում են գիտությամբ, և այսօր գիտության թեկնածուի տիտղոսակիր շրջանավարտները իրենց դասախոսների հետ միասին դասավանդում են համալսարանում, մասնակցում գիտաժողովների՝ հավատարիմ մնալով հայրենիքին ծառայելու հակոբյանական պատգամին: Համալսարանի հիմնադիր ռեկտորը, իրեն հատուկ խոհեմությամբ, նախաձեռնել է առաջին գիտաժողովը միայն բուհի հիմնադրումից հինգ տարի անց, երբ համալսարանն ավարտեց շրջանավարտների առաջին սերունդը: Այսինքն՝ իմաստուն այրը համոզված էր, որ գիտաժողով գումարելու բարոյական իրավունք ունի միայն շրջանավարտ թողարկած բարձրագույն դպրո-

ցը: Եվ արդեն քսանհինգ տարի անխախտ պարբերականությամբ համալսարանը գիտաժողովներ է գումարում և գիտական պարբերականներ հրատարակում: Համավարակի պայմաններում համալսարանը կազմակերպեց միջազգային առցանց գիտաժողով՝ նվիրված Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակին, որին մասնակցեցին Վենետիկի Մխիթարյան միաբանության հայրերը՝ քահանայապետ Գերապայծառ Տեր Լևոն արքեպիսկոպոս Զեքիյանի գլխավորությամբ: 2022 թվականի հուլիսի 2-ին գումարված գիտաժողովը յուրօրինակ հաշվետվություն է հիմնադիր ռեկտորին, միաժամանակ, տարեշրջանի ավարտ և նոր՝ հոբելյանական տարվա սկիզբ: 2023 թվականին լրանում է ԳՊՀ հիմնադրման 30-ամյակը:

Այսպիսով, ի պատիվ Հրանտ և Հրանուշ Հակոբյանների և նրանց անվերապահորեն վստահած համախոհների՝ արդեն երեք տասնամյակ Գեղարքունյաց աշխարհում տրոփում է համալսարանական կյանքի զարկերակը՝ Հրանտ Հակոբյան 1 հասցեից սփռելով սեր, լույս ու ջերմություն, ապահովելով կապը սերունդների միջև, երիտասարդներին փոխանցելով իմացություն և օգտակար սոցիալական փորձ, արմատավորելով հայրենասիրություն, բարձր արժեքներ, հավատարիմ մնալով Գավառի պետական համալսարանի հիմնադիր ռեկտորի պատգամին՝ դաստիարակել մարդ, կրթել որակյալ մասնագետ:

ՀԱԿՈԲՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ,
Գավառի պետական համալսարանի ռեկտոր

INTRODUCTORY SPEECH

The 25th conference of Gavar State University is dedicated to the 95th birthday anniversary of Hrant Khachatur Hakobyan, founding Rector of the University, Doctor of Philosophy, Professor, Honored Pedagogue of the Republic of Armenia, Honorary Citizen of Gavar city.

I express my gratitude to the organizing committee of the conference and all the participants for engaging in scientific research activities. The jubilee conference is of great importance for Gavar State University, as it is not only a tribute to the memory of Hrant Hakobyan, but also a unique report to the founding Rector and, at the same time, the end of the term and the beginning of a new jubilee year. 2023 marks the 30th anniversary of foundation of Gavar State University.

Hereby, for three decades, Gavar State University has been imparting knowledge and useful social experience to the youth, spreading love and light, ensuring the connection between generations, instilling patriotism, high values and adhering to the founding Rector's commandment: to educate a good person, to prepare a qualified specialist.

HAKOBYAN RUZANNA
Doctor of Law, Associate Professor,
Rector of Gavar State University

ВСТУПИТЕЛЬНОЕ СЛОВО

Гаварский государственный университет организовал 25-ю юбилейную научную конференцию, посвященную 95-летию со дня рождения ректора-основателя университета, доктора философских наук, профессора, заслуженного педагога Республики Армения, почетного гражданина города Гавар Гранта Хачатуровича Акобяна.

Благодарю оргкомитет и всех участников конференции за активную научно-исследовательскую деятельность. Юбилейная конференция имеет важное значение для Гаварского государственного университета, так как она не только дань памяти выдающемуся Ученому и Учителю-Гранту Акопяну, но и своеобразный отчет ректору-основателю и начало нового юбилейного года. В 2023 году исполнится 30 лет со дня основания Гаварского государственного университета. Таким образом, на протяжении трех десятилетий Гаварский государственный университет передает молодым людям знания и полезный социальный опыт, сея любовь и свет, обеспечивая связь поколений, прививая патриотизм, высокие ценности, оставаясь верным завету ректора-основателя - воспитывать Человека, готовить квалифицированного специалиста.

АКОБЯН РУЗАННА
доктор юридических наук, доцент,
Ректор Гаварского государственного университета